ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1965 Общественные науки

Ռ. Գ. Գրիգորյան

ՀԱՅ ԾՈՎԱՅԻՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը 1942 թ. ամռանը թևակոխում է նոր, մեր երկրի համար ավելի ծանր շրջան։ Այդ ժամանակ իրադրությունը, հատկապես Սև ծովում, փոխվում է հօգուտ հակառակորդի։ Եթե 1941 թ. ամռանը սովետա-գերմանական ռազմաճակատում գերմանացիները կենտրոնացրել էին 208 դիվիզիա, ապա 1942 թ. ամռանը դրանց թիվը հասնում է 237-ի, իսկ աշնանը՝ 266-ի[1]։ Ընդ որում, եթե գերմանական հրամանատարությունը 1941 թ. իր զորքերը շարժում էր ամբողջ ճակատով, ապա 1942 թ. իր ուժերը հիմնականում նա շարժեց հարավ և հարավ-արևելք։

Հիտլերականների բանակային «Ա» և «Բ» խմբավորումների ամառային հարձակումները սկսվում են Վորոնեժի և Ռոստովի ուղղություններով։ «Բ» խմբավորումը գործում էր Վորոնեժ—Ստալինգրադ, իսկ «Ա» խմբավորումը՝ Ռոստով—Կովկաս ուղղությամբ։

Այդ հարձակման նպատակն էր մի կողմից գրավել Ստալինգրադը, որպես կարևորագույն ռազմա-ստրատեգիական հանգույց, մյուս կողմից՝ սևծովյան նավահանգիստները, Կովկասի նավթային շրջանները և վերջապես ամբողջ Անդրկովկասը։

«Ա» խմբավորումն ուժեղացվելով տանկային 4-րդ բանակով, հուլիսի 25-ին շարժվում է դեպի Կովկաս։ Այդ խմբավորման կազմի մեջ մտնում էին 11 հետևակային, 3 լեռնա-հրաձգային, 6 տանկային, 4 մեքենայացված, 3 հեծյալ դիվիզիաներ[2]։ Ըստ պաշտոնական տվյալների, այդ խմբավորման կազմում հաշվվում էր 167 հազար զինվոր ու սպա, 1130 տանկ, 4570 հրանոթ ու ականանետ և մոտ 1000 ինքնաթիռ[3]։ Ինչ խոսք, հակառակորդը ռազմաճակատի միայն այս հատվածում ուներ ուժերի հսկայական գերակշռություն։ Այսպես. նրա կենդանի ուժը գերազանցում էր մեկուկես անգամ, հրետանին՝ 2 անգամ, տանկերը՝ համարյա 9 անգամ, ինքնաթիռները՝ 8 անգամ։ Ահա ուժերի այսպիսի հարաբերակցությամբ սկսվեցին Կովկասի համար մղվող մարտերը։

Հակառակորդը կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց տակտիկական զգալի հաջողություններ։ Կարմիր բանակի առջև դրվեց դժվարին ու պատասխանատու խնդիր՝ կանգնեցնել դեպի Կովկաս շարժվող հակառակորդի «Ա» խմբավորման առաջխաղացումը, փոխել ուժերի հարաբերակցությունը և, ապա անցնելով վճռական հարձակման, գլխովին ջախջախել թշնամուն։

Պատմության մեջ այդ հերոսամարտը հայտնի դարձավ «Կովկասի պաշտպանություն» անունով։ Այդ պաշտպանությունը հանդիսացավ անդրկովկաս-

---

1 *Տե՛ս «Սովետական Միության կոմունիստական պարտիայի պատմություն», երկրորդ լրացված հրատարակություն, Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 696։*

2 «Вторая мировая война 1939—1945 гг.», Воениздат, 1959, М., стр. 325.

3 См. «Краткая история Великой Отечественной войны Советского Союза», 1941—1945 гг., Воениздат, Москва, МО СССР, 1964, стр. 159.

յան և հյուսիս-կովկասյան ժողովուրդների բախտորոշ խոշորագույն իրադարձությունը։ Կովկասի համար մղված մարտերը, որոնք տևել են 1942 թ. հուլիսի 25-ից մինչև 1943 թ. հոկտեմբերի 9-ը, բաժանվում են երկու շրջանի։

Առաջին շրջանը, որն սկսվում է 1942 թ. հուլիսի 25-ից և տևում մինչև 1943 թ. հունվարի սկիզբը, բնորոշվում էր որպես կարմիր բանակի ժամանակավոր նահանջի և համառ պաշտպանողական մարտերի շրջան։

Այդ շրջանում սովետական զորքերը, արտակարգ բարդ պայմաններում, ծանր մարտերով հետ քաշվեցին դեպի Կովկասյան նախալեռները։ Ձավթելով Ռոստովի շրջանը, Կալմիկական ԱՍՍՌ-ն, Կրասնոդարի և Օրջոնիկիձեի երկրամասերը, թշնամուն հաջողվեց ներխուժել նույնիսկ Կաբարդինա-բալկարական, Հյուսիսային-օսեթական և Չեչենո-ինգուշական ավտոնոմ հանրապետությունները։ Սակայն հինգամսյա համառ դիմադրությամբ կարմիր բանակի հերոսական զորամասերը ձախողեցին գերմանա-ֆաշիստական հրամանատարության ծրագիրը։

Մեր երկրի հարավին սպառնացող վտանգը ավելի մոբիլիզացրեց և համախմբեց սովետական ժողովրդին։ Կովկասը պաշտպանելու դուրս եկան եղբայրական բոլոր ժողովուրդների զավակները։ Կովկասի պաշտպանության մարտերում վառ կերպով դրսևորվեց սովետական ժողովուրդների լենինյան բարեկամությունը, նրանց ինտերնացիոնալ միասնությունը։ Սովետական ռազմիկները մղում էին կենաց ու մահու կռիվ։ Ինչպես զորային մյուս միավորումներում, այնպես էլ ծովային նավատորմի և ռազմածովային ավիացիայի զորամասերում անմահացան սովետական շատ ռազմիկներ։ Հայրենիքի սերը նրանց ոգեշնչում էր նորանոր սխրանքների, հերոսական գործերի։ Այդ արիացած ծովայինների շարքերում քիչ չէին նաև հայ ժողովրդի զավակները։

Նրանք Հայրենական մեծ պատերազմի տարիներին ապացուցեցին, որ ընդունակ են ոչ միայն շարքային նավաստի լինելու, այլև բարձրաստիճան հրամանատար, որով և մեկ ընդմիշտ հօդս ցնդեց ցարական չինովնիկների այն կանխակալ կարծիքը, թե «հայերը ծովից հեռու գտնվելով՝ հակում չունեն դեպի ծովը և ընդունակ չեն այդ դաժան և առանձնահատուկ ծառայությունը կատարելու»[4]։

1942 թ. ամռանը, երբ գերմանական զորքերը Կերչից շարժվեցին Կովկաս, մեր նավերը ետ քաշվելով դեպի կովկասյան ափերը, բազավորվեցին Նովորոսիյսկ, Տուապսե, Փոթի նավահանգիստներում։ Հակառակորդը հարձակվեց այդ օբյեկտների վրա։ Արտակարգ ծանրացավ նշված շրջանները պաշտպանող սովետական զորքերի վիճակը։ Այդ դժվարին ժամանակաշրջանում Կովկասյան ռազմաճակատում էր գործում ՍՍՌՄ ռազմածովային ուժերի ժողովրդական կոմիսարի առաջին տեղակալ, նավատորմի ծովակալ, Սովետական Միության հերոս Իվան Ստեփանի Իսակովը (Հովհաննես Տեր-Իսահակյան)։ Դեռևս 1942 թ. մարտին Իսակովը նշանակվում է Կովկասյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ և ռազմական խորհրդի անդամ։ Նա ղեկավարում էր Սևաստոպոլի մատակարարման գործը, կազմակերպում Նովորոսիյսկի, Տուապսեի և Սև ծովի կովկասյան մյուս նավահանգիստների պաշտպանությունը։

Իսակովի անմիջական ղեկավարությամբ Սևծովյան նավատորմը նույնիսկ հարձակումներ էր գործում հակառակորդի Սև ծովի արևմտյան ափերի բազա-

4 Ի. Ս. Իսակով, Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում, Հայպետհրատ, Երևան, 1946, էջ 9։

ների վրա։ Այդ հարձակողական մարտերում նա կարողանում էր հմտորեն գործակցել նավատորմի և ցամաքային զորքերի մարտական փոխգործողությունները, օգնել ռազմամթերք ու սպառազինություն փոխադրող զորամասերին։

Հոկտեմբերին ավելի է ծանրանում Տուապսեի հատվածում գտնվող սովետական զորքերի վիճակը։ Սևծովյան և ազովյան ռազմական նավատորմերին հրամայված էր օգնել ցամաքային զորքերին պաշտպանելու առափնյա շրջանները և թույլ չտալ թշնամուն ափ հանելու ծովային դեսանտ։ Այս հատվածում գործող ծովային նավատորմը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին թշնամու ուժեղ ռմբակոծության տակ կարողացավ վոխադրել ավելի քան 50,000 սովետական ռազմիկներ և համազորային միավորումների համար անհրաժեշտ քանակությամբ բեռներ։ Իսակովը գտնվում էր արյունահեղ մարտերի ամենաթեժ հատվածում։ Հոկտեմբերի 6-ին թշնամու ռմբակոծությունից ծովակալը ծանր վիրավորվում է և կորցնում գիտակցությունը։ Դեռ առաջավոր գիծը չանցած նա նորից է ընկնում ռմբակոծության տակ և այս անգամ գրկվում ձախ ոտքից։

1943 թ. մայիսին Իսակովը սովետական գեներալների թվում նորից գրավում է իր պատվավոր տեղը և իր 30-ամյա զինվորական ծառայության հարուստ փորձն ու անսպառ գիտելիքները ի սպաս դնում մեր հայրենիքի վերջնական հաղթանակի վեհ գործին։

Հայրենական պատերազմում աչքի ընկած ծառայությունների համար Իսակովը պարգևատրվում է Լենինի շքանշանով, Կարմիր դրոշի երկու, Ուշակովի առաջին աստիճանի շքանշաններով։ 1944 թ. մայիսին նրան շնորհվում է նավատորմի ծովակալի բարձրագույն կոչում։ Այժմ դոկտոր, պրոֆեսոր Ի. Իսակովը զբաղվում է գիտահետազոտական աշխատանքով։ Նա «Ծովային ատլաս» մեծածավալ աշխատության գլխավոր խմբագիրն է, որի համար դեռևս 1951 թ. արժանացել է պետական մրցանակի։

Հայրենական պատերազմի տարեգրության մեջ անմոռաց հիշատակ թողեց Սովետական Միության կրկնակի հերոս, փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը։ «Բալթյան մրրկահավը», ինչպես անվանում էին նրան, իր գրոհիչ օդանավով գտնում էր թշնամուն, որտեղ էլ նա թաքնված լիներ։ Ստեփանյանը մեծ գործ կատարեց սևծովյան գլխավոր նավահանգիստների և կովկասյան ափերի պաշտպանության մարտերում։ Նա գրոհում էր գերմանական տանկային և մոտոմեքենայացված զորասյուների վրա և ոչնչացնում թշնամու բազմաթիվ տանկեր, կենդանի ուժ, տեխնիկայի այլ միջոցներ, գետանցման ուղիներ։ Սովետական բազեի տարերքը հերոսությունն էր, սխրագործությունը։

Սևծովյան նավատորմում աչքի ընկած ծառայության համար Ն. Ստեփանյանը 1942 թ. հոկտեմբերին արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման։ Բալթյան ռազմաճակատի նավատորմի քաղվարչության լույս ընծայած թերթիկում դետեղված Ն. Ստեփանյանի հանդիսավոր խոստման մեջ ասված է. «Քանի դեռ բաբախում է սիրտս, իմ սրբազան պարտքն է մինչև արյանս վերջին կաթիլը պաշտպանել իմ սիրելի հայրենիքը, մեր հիանալի սովետական ժողովուրդը»[7]։

---

5 Генерал-майор И. В. Тюленев, Через три войны. Воениздат, МО СССР, Москва, 1960, стр. 244.

6 Տե՛ս «Պրավդա», 15 մարտի 1951, № 74։

7 ЦМСА, ф., Герои Советского Союза, фотолистовка № 69510.

Հետագայում Նելսոն Ստեփանյանն իր ռազմական ողջ տաղանդը և ընդունակությունները ծառայեցրեց սովետական Բալթիկայի ազատագրմանը։ Նա հերոսի մահով զոհվեց 1944 թ. դեկտեմբերի 14-ին, Բալթիկայի համար մղված օդային արտակարգ ծանր մարտում։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թ. մարտի 6-ին փոխգնդապետ Ն. Գ. Ստեփանյանին ետմահու շնորհեց Սովետական Միության կրկնակի հերոսի կոչում։ Նա հայ ժողովրդի միակ կրկնակի հերոսն է։

Սևծովյան առափնյա պաշտպանության ծովային զորքերի կազմում աչքի ընկնող ծառայություն է մատուցել դիտողության և կապի ծառայության պահակակետի պետ, երկրորդ աստիճանի ավագ Հրանտ Գասպարյանը։ Հակառակորդի ինքնաթիռները տարբեր ժամանակներում պահակակետի շուրջը նետում են մոտ 800 ռումբ, գերմանական կործանիչներն ու ռմբակոծիչները գնդացիրներով ու թնդանոթներով ռմբակոծում են պահակակետը, սակայն Գասպարյանն իր անձնակազմով կանգուն է մնում մարտական պոստում։

1942 թ. օգոստոսի վերջին ֆաշիստական 24 ռմբակոծիչ պահակակետի շրջակայքում գտնվող կատերի վրա նետում են 84 ռումբ։ Գասպարյանը իր մարտիկների հետ, կյանքը վտանգի ենթարկելով, փրկում է կատերների անձնակազմի 20 վիրավոր նավատորմայինի։

Դրանից մի քանի օր հետո, երբ թշնամու ավտոմատավորները շրջապատում են պահակակետը, Գասպարյանը երկու նավատորմայինի թողնում է հետախուզություն կատարելու համար, իսկ ինքը չորս զինվորի հետ մարտի է մտնում թշնամու դեմ։ Չնայած գերմանացիների թվական գերակշռությանը, պահակակետի անձնակազմը Գասպարյանի հրամանատարությամբ, արիաբար ետ է մղում թշնամու ավտոմատավորների գրոհները, առանց նահանջելու դիմանում մինչև էվակուացման հրաման ստանալը։

Սևծովյան նավատորմի ծովային հետևակի 7-րդ բրիգադի 4-րդ գումարտակի հետախույզ Կարապետ Նահապետյանը հետախուզության ժամանակ սողալով մոտենում է 50 միլիմետրանոց ականանետային մարտկոցի, նռնակներով շարքից հանում մեկ ականանետ, իսկ մյուս երկու ականանետից կրակի տարափ տեղում խուճապահար փախչող հիտլերականների վրա, ապա շարունակում առաջ սողալ դեպի հակառակորդի դզոտը։ Գրավելով դզոտը, Նահապետյանը գնդացրային կրակով ոչնչացնում է ավելի քան 40 գերմանացի։ Նա մարտի դաշտից դուրս է բերում մեկ վիրավոր զինվորի և թշնամու 50 մմ-ոց ականանետը[8]։ Այս սխրագործության համար նավատորմային Կարապետ Նահապետյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

1942 թ. նոյեմբերին Ստալինգրադի տակ սովետական բանակի հարձակմամբ վերջնականապես շրջապատվեց և գլխովին ջախջախվեց ֆելդմարշալ Ֆոն-Պաուլյուսի 330 հազարանոց բանակը։ Մեր զորքերի այդ հարձակումը հանդիսացավ Հայրենական պատերազմի արմատական բեկման սկիզբը։

Այդ հաղթանակը պայմաններ ստեղծեց սովետական զորքերի ստրատեգիական մեծ հարձակման, մեր հայրենիքի տերիտորիայից ֆաշիստական զավթիչների մասսայական վռնդման համար։ Սովետական զորքերը ստալինգրադյան մարտերից հետո սկսում են ջախջախել թշնամու Կոտելնիկովյան խմբա-

---

[8] Տե՛ս Архив ЦВ Морской музей $\frac{\text{С4}}{\text{С}}$ 61, стр. 4.

վորումը, զարգացնում հարձակումը Իռոստովի ուղղությամբ և ուժեղ մարտեր մղում Կովկասյան ռազմաճակատում։

Կովկասի պաշտպանության երկրորդ շրջանը ընդգրկում է 1943 թ. հունվարից-հոկտեմբեր ամիսները։ Դա արդեն հարձակողական մարտերի շրջանն էր։ Սովետական զորքերը վճռական գործողություններով ավարտեցին թշնամու ջախջախումը Կովկասում և գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրեցին Հյուսիսային Կովկասը։

1943 թ. հունվարի 16-ից սևծովյան խմբավորման զորքերը Կրասնոդարի ուղղությամբ անցնում են հակահարձակման և հունվարի վերջին կոտրելով հակառակորդի համառ դիմադրությունը, միանում 37-րդ բանակի ձախ թևին ու միացյալ ուժերով հարվածում թշնամուն։ Հարձակողական մարտերի այդ շրջանում սովետական բանակը Մոզդոկից, Մալգոբեկից և Կովկասյան նախալեռներից մարտերով հասնում է Եյսկ, Ազովի ծովի ափերը, հակառակորդին պատճառելով մեծ կորուստներ։

Այս էտապի ամենակարևոր գործողություններից են՝ Կրասնոդարի և Նովորոսիյսկի դեսանտային օպերացիաները։

Նովորոսիյսկի դեսանտային օպերացիայում վճռական մարտեր է մղում մայոր Յեղոր Կունիկովի[9] հրամանատարությամբ գործող սևծովյան 800 նավաստիներից բաղկացած դեսանտային խումբը։ Այդ խումբը հաղթահարելով անասելի դժվարություններ, 1943 թ. փետրվարի 3-ի լույս 4-ի գիշերը, Միսխակո հրվանդանում, որը այդ մարտական գործողությունների ժամանակ հայտնի դարձավ Մալայա Զեմլյա անունով, գրավում է 4 կմ երկարությամբ և 2 կմ խորությամբ մի բնագիծ և այն իր ձեռքում պահում մինչև Նովորոսիյսկի ազատագրումը։

Մալայա-Զեմլյայում առաջին դեսանտ իջնողների մեջ քիչ չէին նաև հայ ժողովրդի զավակները։ Այսպես, գումարտակի հրամանատար Գուրգեն Շահբատովը, ավտոմատավորների ջոկի հրամանատար Վլադիմիր Վարդանովը, հեռախոսավար Խաչատուր Մեհրաբովը, կարմիրնավատորմայիններ Վաղարշակ Դիշյանը, Վարդգես Սամվելյանը, Սերգեյ Մարտիրոսյանը, գնդացրորդներ Բաբկեն Ավագյանը, Ռուբեն Օրդուխանյանը, հրետանավոր Սուրեն Պետրոսյանը և շատ ուրիշներ, որոնք հրամանատարության առաջադրանքները սրբությամբ ու արիությամբ կատարելու համար արժանացան կառավարական պարգևների։

Մալայա-Զեմլյայի դեսանտային գործողությունների ակտիվ մասնակից է նաև կոմերիտուհի Վալենտինա Լիվյանը։ Վալենտինան 17 տարեկան էր, երբ սկսվեց հայրենական պատերազմը։ Կապավորների կարճատև դասընթացներն ավարտելուց հետո նա մեկնում է ռազմաճակատ և մասնակցում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող մարտերին։ 1943 թ. մարտնչում է Կրիմսկայա բնակավայրի համար մղվող կռիվներում, ապա ծովային հետևակի 255-րդ կարմրադրոշ բրիգադի 327-րդ առանձին գումարտակի կազմում՝ Մալայա-Զեմլյայի դեսանտային մարտերում։

Կապավոր Վալենտինա Լիվյանն ապահովում էր անխափան կապը գումարտակի և վաշտերի միջև։ Հաճախ թշնամու կրակի տակ, ձմեռվա սառնամանիքին նա անց էր կացնում հեռախոսային գիծ։ Մարտերի ծանր պահերին

9 Կունիկովը զոհվում է փետրվարի 12-ին Մալայա Զեմլյայում և ետմահու արժանանում Սովետական Միության հերոսի կոչման։ Այժմ Միսխակոն կոչվում է Կունիկովկա։

խիզախ կապավորուհին, որպես գթության քույր, մարտի դաշտից դուրս էր բերում նաև վիրավորներին և բժշկական օգնություն ցույց տալիս[10]։

Հայ ծովայիններն անմահացան նաև հռչակավոր «Սևաստոպոլ» գծանավի մղած մարտերում։ Ավելի քան 20 ազգության ներկայացուցիչների թվում էին՝ հեռաձիգ Գրիգոր Հակոբյանը, ծանր հրանոթի հրամանատար Միհրան Պետրոսյանը, նավատորմայիններ Մանուկյանը, Մեղրիկյանը, Սիմոնյանը, Զհյթունյանը, Խաչատրյանը, Եղիազարյանը, Առաքելյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց քաջագործություններով հավերժացրին թե՛ իրենց և թե՛ հարազատ ժողովրդին։

Գծանավի ամբողջ անձնակազմը ակտիվորեն մասնակցել է 1943 թ. փետրվարի 3-ին Նովորոսիյսկ—Միսխակո հենակետում դեսանտ իջեցնելուն։ Արհամարհելով բնական ու արհեստական խոչընդոտները, նավի անձնակազմը հենակետ հասցրեց մայոր Յեզար Կունիկովի դեսանտայիններին։ Գծանավը նման մարտական արշավ կատարեց նաև փետրվարի 6-ի գիշերը։ Սովի 7-բալանոց փոթորկահույզ ալեկոծության պայմաններում, թշնամու տեղատարափ կրակի տակ գծանավը կատարեց ևս 11 մարտական արշավ[11]։ Այս ամենը օժանդակեց ընդհանուր հարձակմանը, Նովորոսիյսկի և Կովկասի ազատագրմանը։

1943 թ. փետրվարի վերջին Գելենջիկում ծովափնյա զորամասերը նախապատրաստվում էին դեսանտային համալրումներ ուղարկելու Մալայա-Զեմլյա։ Ավագ Ռուբլյովի մոտորոտին հրամայվում է դեսանտային լրիվ սպառազինված մեկ ջոկատ՝ թվով 45 հոգի, հասցնել Միսխակո։ Գիշերվա խավարում մոտորոտը մոտենում է Միսխակոյի ափերին։ Գոլդուն լեռան գագաթներում դարանակալված հակառակորդը նկատում է մոտեցող մոտորոտին և անմիջապես ականանետային հուժկու կրակ բացում։ Այդ միջոցին մոտորոտի հրամանատարի տեղակալ Զավեն Եղիազարյանը ծովում նկատելով թշնամու մագնիսային ական, հրացանի կրակով պայթեցնում է այն։ Թշնամին ավելի է ուժեղացնում կրակը։ Եղիազարյանը հրետանուց դիպուկ կրակ է տեղում հակառակորդի վրա, լռեցնում նրա չորրորդ կրակակետը։ Դեսանտային ջոկատը բարեհաջող ափ է իջնում և անցնում հարձակման։ Իսկ մոտորոտի անձնակազմը չորս ժամ տևող կատաղի կռվից հետո վերցնում է 11 ծանր վիրավորի, վերադառնում Գելենջիկ։ Մարտական այս առաջադրանքն անթերի կատարելու համար մոտորոտի ողջ անձնակազմը արժանանում է հրամանատարության շնորհակալությանը, իսկ ավագ Ռուբլյովը, Եղիազարյանը և մոտորիստ Լյապուկինը պարգևատրվում են Կարմիր աստղի շքանշանով։

Ծովային հետևակի 393-րդ ինժեներական դումարտակում էր ծառայում եֆրեյտոր Ժորա Մակարյանը։ Ծովում ականաղերծելով ճանապարհը, դումարտակը նավով մոտենում է ծովախորշին և ափ իջնելով անմիջապես գրոհում Նովորոսիյսկի երկաթուղային կայարանի վրա։ Սակրավոր Մակարյանը ընթանում էր դումարտակի առջևից, և մարտի դաշտից հեռանում է միայն ծանր վիրավորվելուց հետո։ Խիզախ սակրավորը արժանանում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանի։

---

10 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 253, վ. Լիվյանի պարգևաթերթիկից։

11 См. Архив ВМФ, МО СССР, $\frac{\text{СФ}}{\text{С}}$ 265. инв. № 53, стр. 107.

Նովորոսիյսկի և Թամանի ազատագրման մարտերում աչքի ընկնող ծառայություններ կատարեց նաև ավագ նավատորմային Հիրակ Թումասյանը։ Կոմերիտական Թումասյանը «Էրլիկոն» հրանոթի երկրորդ համարն էր։ Փետրվարի ցրտաշունչ օրերին նա կատաղի կրակով լռեցնում է հակառակորդի կրակակետերը և ապահովում հետախույզների ափ հանումը։ 1943 թ. հուլիսի 29-ին հակառակորդի «Յու-87» տիպի 23 ինքնաթիռ և 8 «Մեսերշմիդտներ» սկսում են ռմբակոծել մեր զորամասերի դասավորությունները։ «Էրլիկոնը» կրակ է բացում նրանց վրա և դիպուկ հարվածով շարքից հանում մեկ «Յու-87»։ Հետագա մարտերում «Էրլիկոնը» իր անձնակազմով շարունակում է լռեցնել և ոչնչացնել հակառակորդի գնդացրա-հրետանային կետերը։ Այդ բոլոր գործողություններին ակտիվ մասնակցելու համար Հիրակ Թումասյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանակիր բոցման Արշակ Առաքելյանը գտնվում էր այն տորպեդային նավի վրա, որը ներխուժելու էր Նովորոսիյսկի նավահանգիստը և տորպեդային հարվածով ճնշելու հյուսիսային ծովապատնեշի և Կապստաժնայա նավահանգստի հակառակորդի կրակային կետերը։ Բոցման Առաքելյանի ջանքերի շնորհիվ կատերի նյութական մասը աշխատում է անխափան։ Նրա կատերից արձակած տորպեդները դիպուկ հարվածով ոչնչացնում են մեկ դոտ և 45 միլիմետրանոց ավտոմատ թնդանոթը, հեշտացնելով դեսանտայինների անարգել մուտքը նավահանգիստ։ Այնուհետև տորպեդային կատերը Կաբարդինկայայից դեսանտ է տեղափոխում Կապստաժնայա։ Այդտեղ Առաքելյանը ոչնչացնում է ևս երկու կրակակետ՝ դեսանտայինների համար ճանապարհ բացելով դեպի ափ[12]։

Պահակային կատերի հրամանատար ավագ լեյտենանտ Միքայել Սահակյանի անունը անխզելիորեն կապված է Օդեսայի, Սևաստոպոլի, Թեոդոսիայի, Կերչի, Նովորոսիյսկի, Անապայի, Թամանի համար մղված մարտերի հետ։ Նա կատարում էր տարբեր մարտական առաջադրանքներ. նրան կարելի էր տեսնել փոխադրանավերին ուղեկցելիս՝ պահպանելով նրանց թշնամու ականանետերից ու խոյընթաց ռմբակոծիչներից, հետախույզ ջոկատների ափհանմանը օգնելիս, կլիմայական անբարենպաստ պայմաններում հակաօդային դիտողությունը ապահովելիս։

1943 թ. սեպտեմբերի սկիզբն էր։ Կարմիր բանակի, ինչպես մյուս միավորումները, այնպես էլ ռազմածովային զորամասերը պատրաստվում էին Նովորոսիյսկի վրա գրոհելու։ Ավագ լեյտենանտ Սահակյանի պահակային-դեսանտային կատերը, դեսանտ հանելու հետ մեկտեղ, պետք է ճանապարհ բացեր մնացած կատերների գործողության համար։ Երբ հրետանային նախապատրաստությունից հետո կատերը շարժվում է դեպի ափ, գերմանացիները նրա վրա ականանետային կրակ են բացում։ Այդ տեղատարափ կրակի տակ կատերը մոտենալու էր ափի այն մասին, որտեղ գտնվում էին գերմանական ավտոմատավորները։ Այսպիսի լարված պայմաններում ամեն ինչ կախված էր հրամանատարի ճիշտ կողմնորոշումից։ Այդ օրհասական րոպեներին, երբ հրամանատարն ամեն ինչ մոռացած մտածում էր միայն դեսանտը հաջող տեղ հասցնելու մասին, հանկարծ հնչում է ազդանշանորդի ձայնը.

— Աջ կողմից տորպեդ։

---

12 Տե՛ս ՀՊՊԿ արխիվ, ֆ. 253, գ. 8, թ. 3—4։

— Դեպի առա՞ջ, լրիվ ընթացք,—հրամայում է Սահակյանը։

Բայց արդեն ուշ էր։ Տորպեդը մեխվել էր կատերի մեջ, մեքենայական մասում բացելով 65 սմ-անոց ճեղքվածք։ Ջուրը ներխուժում է բաժին։ Ավագ նավատորմային խորհրդը նետվում է դեպի ճեղքվածքը և իր մարմնով փակում այն։ Համառ կռիվներով կիսով չափ ջրասուզված կատերը ներխուժում է նավահանգիստ։ Առաջինը ցամաք է դուրս գալիս ավագ բոցման Սկովնինը, որը դիպուկ գնդացրային կրակով ցրում է թշնամու ավտոմատավորներին և ճանապարհ բացում դեսանտայինների համար։ Պահակային կատերը իր փորձված հրամանատար Սահակյանի գլխավորությամբ հաջողությամբ կատարում է մարտական առաջադրանքը։ Նովորոսիյսկի ազատագրման մարտերում հրամանատարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար դիվիզիոնը արժանանում է «Նովորոսիյսկյան» անվան, իսկ Սահակյանը պարգևատրվում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի և Կարմիր դրոշի շքանշաններով[13]։

Նույն գործողության ժամանակ աչքի ընկավ նաև կրտսեր սերժանտ Առուստամ Դավթյանը։ Նա առաջիններից մեկը ափ իջնելով հակատանկային հրացանով ոչնչացնում է թշնամու գնդացրային երկու կետ և 20 ֆաշիստ. ծանր վիրավոր վիճակում նա շարքից հանում է ևս մեկ ավտոմեքենա։ Այս մարտերին ակտիվ մասնակցելու համար կրտսեր սերժանտ Դավթյանը արժանանում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանի։

Նովորոսիյսկի համար մղված մարտերի ակտիվ մասնակից էր նաև ծովային գումարտակի գնդացրորդ, երկրորդ կարգի ավագ Խաչատուր Բակունցը։ 1943 թ. սեպտեմբերի 11-ին ծովային հետևակի 393-րդ առանձին գումարտակի ստորաբաժանումները ափ են իջնում ածխային նավամատույցի շրջանում։ Այդտեղ Բակունցը իր ընկերներով ոչնչացնում է մեկ տանկ, նռնակներով պայթեցնում թշնամու դզոտը, շարքից հանում հիտլերականներին, գրավում մեկ գնդացիր և երեք ավտոմատ։ Սեպտեմբերի 12-ին ջոկը ջրով բավարարելու նպատակով, Բակունցը իր ընկերներով գրավում է ակումբի շենքի ներքնահարկը և լուծում ջրի հարցը։ Հաջորդ օրը, զարգացնելով մարտական գործողությունները, ջոկը ամբողջովին գրավում է ակումբը, ոչնչացնում հակառակորդի 19 զինվոր ու սպա, վերցնում չորս «լեզու» և ռազմաավար։ Միայն ծանր վիրավորվելուց հետո Բակունցը թողնում է մարտադաշտը։

Կովկասի ազատագրման համար մղված հարձակողական գործողություններին ակտիվ մասնակցում են նաև 4-րդ և 8-րդ օդային բանակի ուժերը։ Այդ բանակների տարբեր ստորաբաժանումներում ծառայում էին բազմաթիվ հայ օդաչուներ, որոնց թվում իրենց պատվավոր տեղն են գրավում գվարդիայի փոխգնդապետ Վազգեն Օգանեսովը, կապիտան Հակոբ Մանուկյանը (հետագայում Սովետական Միության հերոսներ), գվարդիայի կապիտաններ Վարդգես Վարդանյանը, Գուրգեն Բաղդասարովը, լեյտենանտ Շավարշ Պողոսյանը և շատ ուրիշներ, որոնցից շատերը իրենց երիտասարդ կյանքը նվիրաբերեցին հարազատ Կովկասի ազատագրմանը։

Գվարդիական 8-րդ գրոհային ավիագնդի բազեները Նովորոսիյսկի վրա մարտական թռիչքներ էին կատարում Գելենջիկի օդանավակայանից։ Հրետանային գնդակոծությամբ գերմանացիները մտադրվել էին շարքից հանել ավիա-

13 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 253, գ. 40։

գունդը, բայց գրոհայինները դրանից չեն սասանվում, նրանք շարունակում են իրենց մարտական գործողությունները։

Այդ գնդի էսկադրիլիաներից մեկի հրամանատարն ու գնդի պարտկազմակերպության քարտուղարն էր սևծովյան օդաչուների մեջ իր քաջագործություններով արդեն փառաբանված գվարդիայի կապիտան Վարդգես Վարդանյանը։ Գնդի կազմում նա մասնակցել էր Սևաստոպոլի 256-օրյա հերոսական պաշտպանությանը, որի համար արժանացել էր Կարմիր դրոշի երկու շքանշանի։ Այնուհետև Վարդանյանի խնդրանքով հրամանատարությունը նրան ուղարկում է Հյուսիսային Կովկաս, որտեղ նույն գնդի կազմում մասնակցում է Նովորոսիյսկի օպերացիային։

Վարդանյանի անձնական հաշվում գրանցված է 118 մարտական թռիչք։ Նա ոչնչացրել է թշնամու 26 տանկ, 23 պահականավ ու բեռնանավ, 80 ավտոմեքենա՝ բեռներով և 12 հազարից ավելի հիտլերական։

Բացելով նրա օրագրի 1943 թ. օգոստոսի 12-ի գրառումը, կարդում ենք հետևյալը. «Հայրենիքը, կուսակցությունը ամեն բանից թանկ են և չեմ ցավում, եթե զոհվեմ մեր մեծ գործի համար, մեր հայրենիքի ազատագրության գործի համար»[14]։

Նրա անունը չէր իջնում ճակատային «Չերնոմորսկի սոկոլ», «Կրասնիյ չերնոմորեց», «Զա բոդինու», «Կրասնիյ ֆլոտ» թերթերի էջերից։ Այդ թերթերում զետեղված բազմաթիվ հոդվածները Վարդանյանին որակում են որպես բոցաշունչ հայրենասերի, խիզախ և անվախ օդաչուի, հոգատար ու կարեկցող հրամանատարի ու ընկերոջ։ «Կրասնիյ չերնոմորեց» թերթում կարդում ենք. «Օգոստոսի 26-ին Սովետական Միության հերոս, գվարդիայի մայոր Եֆիմովի օդաչուները, առաջատար կապիտաններ Վարդանյանի և Կոնյուխի ղեկավարությամբ հանկարծակի գրոհով ռմբակոծեցին նավահանգիստներից մեկում գտնվող թշնամու պահեստները։ Այդ օպերացիայի ժամանակ խորտակվեցին դեսանտային արագընթաց չորս բեռնանավ, պահակային հինգ կատեր։ Պայթեցվեցին մարտական նյութերի մեկ և վառելանյութի երկու պահեստ, վնասվեցին պահակային վեց կատեր»[15]։

Սեպտեմբերի 11-ին 8-րդ գրոհային գնդի երկրորդ էսկադրիլիան առաջադրանք է ստանում գրոհելու Նովորոսիյսկ կայարանի ուղղությամբ առաջ շարժվող գերմանական տանկերի և հետևակի վրա։ Էսկադրիլիան, որը բաղկացած էր յոթ ինքնաթիռից, առաջնորդում էր գվարդիայի կապիտան Վ. Վարդանյանը։ Հենց առաջին նետած ռումբերով հրամանատարը և նրա տեղակալ կապիտան Պարմենովը ոչնչացրին հակառակորդի երկու տանկ։ Գերմանացիները բացեցին զենիթային ուժեղ կրակ։ Գվարդիականները չշփոթվեցին։ Նրանք անվախ գնում էին իրենց սիրելի հրամանատարի հետևից։ Վարդանյանի ղեկավարությամբ օդաչուներ Միխայլովը, Մելիկովը, Յուլիկովը, Ժիտկովը, Ուգարովը կրակի հեղեղ տեղացին հիտլերականների վրա։ Իրար հաջորդող մի քանի գրոհների ժամանակ նրանք ոչնչացնում են ևս երեք տանկ, մնացածները ետ են քաշվում։ Մեր գրոհիչները ռմբակոծում են թշնամու հետևակային կուտակումները։

---

14 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 244, գործ 24, էջ 59։

15 «Красный черноморец», 29 августа, 1943.

Նովորոսիյսկի համար մղվող կատաղի մարտերում, որոնք տևեցին յոթ օր, 8-րդ գրոհային ավիագունդը կատարում է 1097 մարտական թռիչք՝, թշնամուն հասցնելով մեծ կորուստներ։

Ավիացիոն 2-րդ դիվիզիան, որի կազմի մեջ էր 8-րդ գրոհային գունդը, Նովորոսիյսկ քաղաքի ազատագրման համար արժանանում է «Նովորոսիյսկյան» անվանը։ Սակայն փառաբանված օդաչու Վարդանյանը չի տեսնում այդ ուրախալի օրը։ Սեպտեմբերի 14-ին Անապա նավահանգիստը ռմբակոծելիս զենիթային հրետանու ուժեղ կրակից վնասվածք է ստանում նրա ինքնաթիռը և, նպատակակետից հեռանալիս, նրա վրա են հարձակվում մի քանի ռմբակոծիչներ, որոնց շախմատաձև կրակից շարքից դուրս է գալիս օդանավը և բոցավառված ընկնում Սև ծովը՝ իր հետ տանելով նաև Վարդգես Վարդանյանին։

Գնդի պատմության մեջ կապիտան Վարդանյանի մասին դրված է հետևյալը. «Վարդանյանի փառաբանված անունը հավիտյան կմնա նրանց հիշողության մեջ, ովքեր նրան ճանաչում էին։ Նա մի կուլտուրական, համեստ, խիզախ օդաչու էր, սիրում էր իր ստորադրյալներին, սովորեցնում մարտական վարպետություն, պահանջկոտ էր ու արդարացի, վայելում էր ամբողջ անձնակազմի սերն ու հարգանքը»[17]։

1943 թ. հոկտեմբերի 9-ին Թամանի ազատագրումով ավարտվեցին Կովկասի համար մղված 15-ամսյա կատաղի մարտերը։

Կարմիր բանակը Հյուսիսային Կովկասը ազատագրեց ֆաշիստական զորքերից։ Իրականացավ անդրկովկասյան ժողովուրդների սրբազան երդումը՝ գլուխները չխոնարհել գերմանական զավթիչների առաջ։

Հայրենական պատերազմում, Կովկասի համար մղված մարտերի հերոսապատումների մեջ իրենց ավանդը ներդրին նաև հայ ծովայինները, որոնք, ձեռք բերելով ռազմական մեծ հմտություն, այն գործադրեցին ֆաշիզմի վերջնական ջախջախմանը։

К. Г. Григорян

МОРЯКИ-АРМЯНЕ В БОЯХ ЗА ОБОРОНУ КАВКАЗА

Резюме

На основе архивных документов и других исторических материалов, автор показывает участие армян в боях Великой Отечественной войны в составе частей морского флота и авиации, обороняющих Кавказ. В смертельных схватках с врагом армяне-моряки и летчики морской авиации бок о бок с русскими, украинцами, грузинами и представителями других национальностей Советского Союза защищали родную землю, показывая яркие примеры воинской доблести и отваги. По достоинству оценив их вклад в дело окончательного разгрома врага, советское правительство удостоило многих из них высоких почестей и наград. Их имена ныне стали гордостью всего советского народа.

---

16 Архив ЦМВМ флота — $\frac{СФ}{Р}$ - 576, стр. 106.

17 Архив ЦМВМ флота $\frac{СФ}{Р}$ 576, стр 45.